ՊԱՂԵՍՏԻՆԱԳԻՐԱԿԱՆ

ԱՔԱԱԲԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՄԱՐԻԱՆ

Է. — Հելլեկիա. — Սամարիան և իր շրջականները ցոյց տուող քարէէսին վրայ թէև չերևար անունս, բայց ան երևք տեղ յիշատակուած կը գտնենք Ս. Գրոց մէջ. 1. — «Եւ խօսեցան Մովսէս և եղիազար քահանայ յԻթարովթ Մովաբու առ Յորդանանու յանդիման Երիքոյի և ասեն . . .» (Թիւ՝ ԻԶ. 3)։ 2. — «Եւ եղև այլոց որդւոցն Մանասէի, ըստ տոհմից իւրեանց, որդւոցն Ասիելեայ և որդւոցն Բեղկեայ և . . .» (Յեսու՝ ԺԷ. 2)։ 3. — «Եւ էին որդիք, Սէմիրայ՝ Ային և Սիւքեմ և Ղակեիա և Անիամ» (Ա. Մնացորդաց՝ Է. 19)։

Ը. — Հոկլան. — Նոյնքան դժուար է նաև որոշել անունիս տեղը. հաւանաբար Նապլուսի արեւմտեան կողմը գտնուող այժմու Բարիյէդ Հաճճա գիւղն է։

Թ. — Քեռի Հա-Թէլ. — Ըստ Reisnerի ասիկա կը գտնուի Սամարիոյ հիւսիսային արևմտեան կողմը, դէպի Միջերկրական ծով, բլուրի մը գագաթը, այժմու Թուլ Քարմ, իրը մեծ գիւղ մը, երկաթուղւոյ կայարանով, որ տարիներով ապստամբներու որջ մը եղաւ։ «Եւ գունդն Ասրովմայ, Քարմի, և գունդն Քարմիայ» (Թիւ՝ ԻԶ. 5)։

Ժ. — Նուահ. — Reisnerի կողմէ Սամարիոյ շատ մը խեցեգիրներուն վրայ կարդացուած Նու'ահն Ս. Գրոց մէջ յիշուած է քանիցս անգամ. այսպէս՝ «Եւ մատեան դստերքն Սաղ'պաադու որդւոյ Ոփերայ, որդւոյ Գաղ'աադու, որդւոյ Մաքիրայ, ի գնդէն Մանասէի որդւոցն Յովսեփայ. և այս են անունք նոցա, Մաղ'ա և Նուա և Եգղա և Մեղ'քա . . .» (Թիւ՝ ԻԷ. 1)։ «Եւ եղեն Թերսա և Եգղա և Մեղքա և Նուա և Մաաղ'ա . . .» (ա'նդ, 11)։ «Եւ այս են անունք դստերացն Սաղ'պաադայ, Մաաղ'ա և Նուա և Եգղա . . .» (Յեսու՝ ԺԷ. 3)։ Հաւանաբար անունս նոյն է Յեսուայ մէջ (ԺԹ. 13) յիշուած ՀանՆեհան անունին հետ. «Եւ անտի պատիցեն հանդէպ ընդ արևելս ձգեալ ի քաղաքն Կատասիմ, և անցցեն յԻեմմոն, յԱմաթարիմ, ԱնՆուայ, և պատեսցեն . . .»։ Այս պարագային, երբեք կասկածելի պիտի չըլլար ԱնՆուան նոյնացնել Աւետարանի Նայինին հետ՝ ուր Յիսուս յարոյց այրի կնոջ միակ որդին. «Եւ եղև ի վաղիւն երթայր (Յիսուս) ի քաղաք մի, որում անուն էր Նային . . .» (Ղուկաս՝ Է. 11)։ Այս գիւղը՝ որուն տեղը կը յիշատակեն Եւսեբիոս և Յերոնիմոս ենդովրայ շրջականները, Թալմուտի մէջ ալ յիշատակուած կը գտնենք իբր Նայիմ. «Բեթսան և աւանք նոցա, . . . բնակիչք Ենդովրայ և աւանք նորա» (Յեսու՝ ԺԷ. 11)։ Արդի նայն ուղղագրութիւնը կապ չունի անունիս հնագոյն ձևին հետ ու աւելի ազդուած է յունական հնչումէն՝ ուրկէ սղած է ain գիրը։

Ժա. — Քեսեհ. — Հայր Աբէլ անունս նոյնացուց Քուսէյնի հետ, Սամարիոյ հարաւը։ Ըստ R. Dussandի ճիշտ պիտի ըլլար նոյնացնել Նապլուսի հարաւակողմը գտնուող Քուզեհի հետ. այս պարագային՝ շատ տեղին է կարդալ Քոսեհ։

Ժբ. — Ճշդելի կը մնայ նոյնպէս Սամ. կ'ենթադրուի որ սա կը գտնուի Նապլուսի արևմտեան կողմը և է ՔաՃr Սա գիւղը, այն ենթադրութեամբ որ գոփ վերջին գիրը ինկած է, համաձայն Սուրիոյ մէջ շատ ընդհանրացած հնչումի մը ձևին։

Ժգ. — Սեհեմ. — Reisner չվարանեցաւ Սեհեմը իսկոյն նոյնացնելու Սիւքեմ — Նէապոլիս — Նապլուսի հետ։ Եւ որովհետև այս անունը կ'երևայ եգիպտական 19ոդ արքայատոհմի Անասդազի փարաւոնի պապիրոսին վրայ, ինչպէս նաև էլ-Ամարնայի տախտակներուն վրայ, ասկէ յայտնի եղաւ որ քաղաքս կը գտնուէր Թիւրի և Յեսուայ գիրքերուն մէջ յիշուած Մանասէի հօր՝ Գաղաադու հայրենական սահմաններուն մէջ։ Սիկիմի մօտ Սելմոն կոչուած լեռ մը կար, ուր Աբիմելէք ելաւ իր զօրքերուն հետ և ձեռքի տապարովը բեռ մը փայտ կոտրեց և ուսերուն վրայ դրաւ, նոյնը ընել հրամայելով իր զինուորներուն, որ-

digitised by A.R.A.R.@

պէսդի խորտակէ Միկիմացւոց վերջին դիմադրութիւնը։ Հաւանաբար չփոթուած է այժմու Ճէպէլ էլ-Իսլամիյէ լերան հետ։

ժդ.— Շամիտա.— Այս անունով ոեէ վայր ծանօթ չէ. Սամարիոյ խեցեգիրներուն վրայ յիշուած Շամիտան հաւանաբար Հին Կտակարանի մէջ տեսնուած Սիման է. «...Սիւքէմ, և գունդ մի Սիւքեմայ, Սիմայի, և գունդ մի Սիմայեայ» (Թիւ՝ ԻԶ. 32)։ «...և որդւոցն Երիէլայ և որդւոցն Եէքէմայ և որդւոցն Սեմիրայեայ...» (Յեսու՝ ԺԷ. 2)։ «Եւ էին որդիք Սեմիրայ՝ Ային և Սիւքէմ...» (Ա. Մնացորդաց՝ Է. 19)։

ժե.— Նաշուբ.— Թիւրի մէջ (ԻԶ. 24) կը յիշուին Իսաքարու որդիները, ըստ իրենց գունդերուն. Թոլղա, Յասուբ և Ամրան։ Վերապահութեամբ կարելի է ընդունիլ որ Նաշուբ կամ Յասուբ այժմու Նասուհն է, Նապլուսի հարաւակողմը, ուր կը տեսնուին հնութեան մնացորդներ։

Նկատելով որ Սամարիոյ խեցեգիրները ցոյց տուին որ Յեսու Նաւեայ կողմէ մեզի հասած ցուցակը (ժէ. 2–3) կը բաղկանար տեղւոյ անուններէ, հարկ պիտի ըլլար ճշդել ուրեմն Ազրիէլի, Ոփերայ, Մաաղայի, Մեղքայի և Թերսայի տեղերը։

Առաջինը՝ Ազրիել՝ հաւանաբար այժմու Ասարին է, Նապլուսի հարաւ-արևմուտքը, ինչպէս որ Եզրե'էլը եղած է Զէրին և Պէյթ-Ճիպրին ալ՝ Պէյթ-Ճիպրին։

Ոփերան ամենայն հաւանականութեամբ քանանական քաղաք մըն է, որ իսրայէլացիներուն հոն հասնելէն առաջ իր թագաւորը ունէր ու ասիկա կը հաստատուի այն իրողութեամբ՝ որ խեցեգիրներուն վրայ տեսնուած այս անունը գոյութիւն ունէր Սամարիոյ շրջանին մէջ. «...զթագաւորն Թափուայ զմի, զթագաւորն Ոփերայ զմի...» (Յեսու՝ ԺԲ. 17)։ Կամ ա՛յն է որ Ոփերայ Նապլուսի հարաւ-արևմուտքը գտնուող այժմու Հաֆուրան է և կամ Սամարիոյ հիւսիսը գտնուող Հաֆիրէն։ Ոփերան յիշուած կը գտնենք նաև ցանկին մէջ ա՛յն քաղաքներուն՝ որոնք կը վերագրուին Սողոմոն թագաւորի վերակացուներէն մէկուն. այդ ցանկին մէջ կ'երևան Արաբովթ, Սոքով և Ոփերայ ամբողջ երկիրը, որ պարտ էր նոյնը եղած ըլլալ Ոփերայ նախկին թագաւորութեան սահմաններուն։ «...որպի Եսդայ՝ յԱրաբովթն, Նորա Սոքով և ամենայն երկիրն Ոփերայ»։ Արաբովթը պէտք է գտնել այժմու Արբաթէի մէջ, Սամարիոյ հիւսիսը, հիւսիսային-արևմուտքէն Սոքովի՝ ներկայիս Շուվէյքէ և արևելքէն Ոփերայի մէջ, ներկայիս Հաֆիրէ։ Հոս պէտք է յիշել որ այս Սոքովը՝ զոր յաճախ շըփոթած են Յուդայի երկրի համանուն մէկ քաղաքին հետ՝ ծանօթացուցաւ եգիպտաբաններէն, եգիպտական ցանկերու օգնութեամբ։ Այս Ոփերան պէտք չէ շփոթել նոյնպէս Իսաքարայ Ափերիմի հետ(¹), որ Աֆուլէի մէջ ցոյց կը տրուի, ինչ որ ճիշդ չէ։ Աւելի հաւանական է տեղը փնտռել Խըրպըդ էլ-Ֆարրիյայի մէջ, որ Եւսեբիոսի Աֆրայան է։ Եգիպտերէնի մէջ Հաֆարէմը ծանօթ է Հապուրումա ձևին տակ։

Բեդսայէլի (Պայզան) հարաւակողմի դաշտագետինը մշակութեան յարմար սքանչելի դաշտ մըն է, որ կ'երկարի մինչեւ Աբելմաուլա կամ Մաուլա, որ նոյնպէս գիւղ մըն էր, ուր ծնաւ Եղիսէէ, այժմեան Այն էլ-Հելվէի շուրջ։ Այս վերջնոյն եւ Պայզանի միջև կը բարձրանայ Թէլ էս-Սարէմը, ուր կարելի է փնտռել Սալէմ աւանը, որ ըստ Յերոնիմոսի Մելքիսեդեկի մայրաքաղաքն է։

Մաաղա քանիցս անգամ յիշուած կը գտնենք Թիւրի մէջ.

ա.— «Եւ Սաղպաադայ որդւոյ Ոփերայ ո՛չ եղեն ուստերք, այլ դստերք. և անուանք դստերացն Սաղպաադայ՝ Մաաղա և Նուա և Եգղա...» (Թիւ՝ ԻԶ. 33)։

բ.— «...և այս են անուանք նոցա. Մաաղա և Նուա և Եգղա...» (անդ, ԻԷ. 1)։

գ.— «Եւ եղեն Թերսա եւ Եգղա եւ Մեղքա և Նուա և Մաաղա...» (անդ, ԼԶ. 11)։

Եւ դարձեալ՝

դ.— «Եւ այս են անուանք դստերացն Սաղպաադայ, Մաաղա եւ...» (Յեսու՝ ԺԷ. 3)։

ե.— «...եւ քոյր Նորա Մալէքէթ ծնաւ զԵսուդ և զԱրիեզեր և զՄոողա...» (Ա. Մնացորդաց՝ Է. 18)։

Հալէպ ԱՐՏԱՒԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Շարունակելի)

(¹) Յեսու Նաւեայ՝ ԺԹ. 19։

digitised by A.R.A.R.@